ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 9

01.07.2021թ. ք. Իջևան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցել են Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Գ. Ալեքսանյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Հ. Մարգարյանը, Պ. Ասիլբեկյանը, Ա. Եգանյանը, ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԽ նախագահ Լ. Մադաթյանը, ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահ Ի. Վարդանյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Ա. Եսայանը: Նիստը անց է կացվել zoom.us հարթակում, գիտական խորհրդի նախագահն է Գ. Ավետիսյանը, քարտուղարը՝ Ա. Ալեքսանյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Գ. Ավետիսյանը:

Օրակարգ

1. Ֆակուլտետի ամբիոնների վարիչների ամփոփիչ հաշվետվություն /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
2. 2021թ. ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփում /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
3. 2-րդ կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացում / Զեկ. Գ. Հովհաննիսյան, Մ. Միքայելյան/:
4. ԿԾ պատասխանատուների գործունեության հաշվետություն /Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:
5. Ուսանողական խորհրդի (ՈՒԽ) նախագահի կատարած աշխատանքների ներկայացում և ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) նախագահի հաշվետվություն /Զեկ. Ա. Եսայան, Ի. Վարդանյան/:
6. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների ամբիոնային ծանրաբեռնվածությունների քննարկում և հաստատում /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
7. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների հաջորդ ուստարվա անհատական բեռնվածությունների ներկայացում և քննարկում /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:

Բաց քվեարկությամբ 14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում՝ 9/1

¬ Հաստատել նիստի օրակարգը։

1. *Լսեցին.- Հաղորդում Ֆակուլտետի ամբիոնների վարիչների ամփոփիչ հաշվետվության մասին/Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/։*

Լսեցին.- Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ Մ. Միքայելյանին։

Մ. Միքայելյանը նշեց, որ «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի աշխատանքները կազմակերպվել են համաձայն հաստատված ամբիոնի աշխատանքային պլանի։ Ամբիոնի բոլոր դասախոսները աշխատել են հաստատված անհատական ծանրաբեռնվածությունների շրջանակում և հիմնականում կատարել են այն պահանջները, որոնք նախատեսված են եղել ուսումնական գործընթացի տարբեր օղակների համար սահմանված ծրագրերով. ուսումնական պլանի համաձայն անհրաժեշտ ծավալի դասաժամերով կարդացվել են դասախոսություններ, անց են կացվել սեմինար ու գործնական պարապմունքները, ինչպես նաև համապատասխան ընթացիկ ու ամփոփիչ քննություններ և ստուգումներ։ Կատարվել են դասալսումներ մայիսի առաջին տասնօրյակում երկու դասընթացների շրջանակում՝ Մակրոտնտեսագիտություն և Վիճակագրություն։ Ընդհանուր առմամբ, դասընթացները դրական է գնահատվել։ Նկատված թերությունների հետ կապված առանձին քննարկում են եղել համապատասխան դասախոսների հետ։ Ամբիոնի դասախոսներ՝ պրոֆեսոր Միքայելյանի, դոցենտ Հակոբյանի, Ֆինանսներ մասնագիտության երրորդ կուրսի ուսանողներ՝ Ի. Վարդանյանի և Դ. Սանթրոսյանի «Սեփականության իրավունքի հատկորոշվածության խնդիրները կորպորատիվ կառավարման համակարգում (Տավուշի մարզի կազմակերպությունների օրինակով)» թեմայով համատեղ ներկայացրած հայտը հաղթել է ԵՊՀ ԻՄ դրամաշնորհային մրցույթում։ Հայտը կֆինանսավորվի ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կողմից՝ 500.000 ՀՀ դրամի չափով։ Ներկայումս խումբը մշակել է աշխատանքային պլան, կատարվել է աշխատանքների բաժանում, ուսումնասիրվել են համապատասխան օրենսդրական դաշտը և մասնագիտական գրականությունը։ Հուլիսին նախատեսվում է շարադրել հետազոտության առաջին մասը։ Սեպտեմբերին նախատեսվում է համատեղ հոդվածի ներկայացում։

Գրախոսվող պարբերականներում /ԲՈԿ-ի կողմից ընդունված/ հրատարակվել են 2 հոդված, ևս մեկ ուսումնամեթոդական աշխատանք ներկայացվել է «Ակունք» հանդեսի խմբագրություն:

Լսեցին.- Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանին:

Գ. Հովհաննիսյանը հաղորդեց, որ 2020-2021 ուստարում «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի ժամերը բաշխվել է ամբիոնի 11 դրույքով և 5 ժամավճարային հիմունքներով հրամանագրված աշխատակիցների միջև: Ամբիոնի 16 աշխատակիցներից 2-ը պրոֆեսորներ են, 3-ը՝ դոցենտ, 8-ը՝ ասիստենտ, իսկ 3-ը՝ դասախոս:

Ամբիոնում իրականացվել է ավարտական աշխատանքների բաշխում, ուսանողներին տրամադրվել են գիտական աշխատանքների բովանդակությունը, գրականության ցանկը, իրականացվել է խորհրդատվություն: Ուշադրություն է դարձվել նրան, որ բոլոր ուսանողները հանդիպեն իրենց ղեկավարներին:

Ամբիոնի կողմից իրականացվել է ընթացիկ քննությունների, ընթացիկ ստուգումների և եզրափակիչ քննությունների անցկացման նախապատրաստական աշխատանքներ: Նախապես տրված հարցաշարերից կազմվել են քննական տոմսերը: Վերահսկողություն է իրականցվել ինչպես ամբիոնի վարիչի, այնպես էլ Կրթական ծրագրերի պատասխանատուի կողմից:

Իրականացվել են թեմատիկ պլանների կատարողականի վերաբերյալ ստուգումներ: Իրականացված ստուգումների արդյունքում թեմատիկ պլանները համապատասխանում էին կատարողականին:

Ամբիոնի վարիչի կողմից իրականացվել են դասալսումներ, արդյունքների քննարկում. առաջադրված խնդիրներին տրվել են կոնկրետ լուծումներ:/ Հաշվետվությունը կցվում է/:

Արտահայտվեցին.- Ա. Պոտոսյանը, Պ. Ասլիբեկյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Տնտեսագիտության ֆակուլտետի Ընդհանուր տնտեսագիտության և Տուրզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնների 2020-21 ուստարվա աշխատանքները գնահատել բավարար:

2. ***Լսեցին.- 2020-2021 ուստարվա Ֆակուլտետի ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփման մասին /Զեկ.Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան /:***

Լսեցին- Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ Մ. Միքայելյանին

Մ. Միքայելյանը նշեց, որ ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները գոհանցնում են, քանի որ գերազանց գնահատական են ստացել չորսը ուսանող, բավարար՝ երեքը, իսկ մնացածը՝ լավ: Այս ցուցանիշը վկայում է այն մասին, որ նախապես կազմակերպված նախապաշտպանության ընթացքում բացահայտվել են թերությունները, շտկվել են բացթողումները: Ավարտական աշխատանքների պաշտպանության ընթացքում ուսանողները լիովին տիրապետում էին իրենց թեմային և կարողանում էին պատշաճ ներկայացնել: Միաժամանակ Մ. Միքայելյանը նշեց, որ հեռական բաժնի ավարտական աշխատանները գոհացնող չէին: Կային աշխատանքները, որոնք առհասարակ հետազոտություն չէր պարունակում, լոկ գրականության մակարդակով կատարած աշխատանքներն են: Ըստ ավրատական աշխատնքների հանձնաժողովի նախագահի՝ առկա համակարգով սովորողների աշխատանքները կիրառական և արդիական են: Իսկ հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողների որոշ աշխատանքներում թեև կային հետազոտություններ, սակայն բավարար չափով չէր:

Գ. Հովհաննիսյանը հաղորդեց, որ «Զբոսաշրջություն» մասնագիտության ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքերը գոհացնող են: Նա նշեց, որ աշխատանքները թիրախային են, արդիական և կիրառական: Ուսանողները հավաքել են, վերլուծել և համակարգել ՀՀ մարզերի զբոսաշրջային ռեսուրսների

վերաբերյալ տեղեկատվությունը: Այդ փաստերի վերլուծության հիման վրա կատարել են իրենց աշխատանքները և եզրահանգումները՝ ռեսուրսների օգտագործման առկա վիճակի և դրանց օգտագործման հեռանկարային գործընթացների վերաբերյալ: Ուսանողները օգտվել են բավարար չափով գրականությունից, որը սակայն նորացումների կարիք ունի:

Միաժամանակ նա հաղորդեց, ավարտական աշխատանքներում ներկայցված են քարտեզագրական նյութեր, բայց ըստ պաշտպանության հանձնաժողովի նախագահի բավարար չէին:

Արտահայտվեցին.- Ա. Սարիբեկյանը, Գ. Ալեքսանյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.12 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2020-2021թ.-ի ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման (ավարտական աշխատանքների պաշտպանության) արդյունքները ընդունել ի գիտություն:

3. ***Լսեցին.-2-րդ կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացման մասին / Զեկ. Գ. Հովհաննիսյան, Մ. Միքայելյան/:***

Մ. Միքայելյանը Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնում հետազոտական աշխատանքներ իրականացվել է երկու դասընթացից՝ մակրոտնտեսագիտություն և վիճակագրություն: Մակրոտնտեսագիտություն /դասախոս՝ Գ.Մինասյան/: առարկայից ուսանողներին հանձնարարվել է անհատական թեմաներ, որն էլ նպաստել է հետազոտական աշխատանքների որակի բարձրացմանը: Վիճակագրություն առարկայի /դասախոս Շ. Տիտանյան/ հետազոտական աշխատանքի կատարումը հաջողվել է կատարել 80 տոկոսով: Նա նշեց, որ հիմնականում կատարվել է անհատական աշխատանքներ, բացի այդ ձևավորվել են ևս երեք խումբ, որոնցում ներգրավվել են 2-ական ուսանող: Ընդհանուր առմամբ կարելի հետազոտական աշխատանքների կատարումը գնահատել բավարար:

Գ. Հովհաննիսյանը նշեց, երկրորդ կիսամյակում ունեինք չորս հետազոտական բաղադրիչով դասընթաց: Քանի որ արդեն իսկ ունեինք փորձ, թերություններից հնարավոր եղավ խուսափել: Գ. Հովհաննիսյանը հավելեց, որ անհրաժեշտ է ավելացնել հետազոտական բաղադրիչի կշիռը, քանի որ այն հնարավորություն է տալիս ուսանողներին կատարել հետաքրքիր հետազոտական աշխատանքներ և ավելի խորը պատկերացնել այդ աշխատանքի իմաստը:

Միևնույն ժամանակ ամբիոնի վարիչները նշեցին, որ հետազոտական աշխատանքի ներդրումը ամբողջովին ուսումնասիրված չէ, քանի որ եթե այդ աշխատանքը պետք է կատարի մեկ դասախոս, ուղղակի նա ի վիճակի չի լինի ամբողջը հանգամանալի վերահսկի:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեց.- 2-րդ կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների մասին հաղորդումը ընդունել ի գիտություն:

4. ***Լսեցին.- Հաղորդում ԿԾ պատասխանատուների գործունեության հաշվետության մասին /Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:***

Լսեցին.- «Ֆինանսներ» (ըստ ոլորտի) ԿԾ պատասխանատու Ա. Սարիբեկյանին:

ԿԾ ղեկավարի գործառույթները, պայմանավորված համավարակով, իրականացվել են հեռավար: Որոշ չափով այն դժվարացնում էր աշխատանքները: Սակայն աշխատանքային պլանով նախատեսված գործընթացները հիմնականում նշված ժամանակացույցին համապատասխան են իրականացվել: Ինչպես յուրաքանչյուր ուսումնական տարի, սեպտեմբեր-հոկտեմբեր ժամանակահատվածը, զբաղեցնում էին ավարտական աշխատանքների թեմաների բաշխումը, առաջին ընթացիկ ստուգումների, գրավորների կազմակերպումը և առաջին կուրսի ուսանողներին կրթական գործընթացին ծանոթացումը: Ակադեմիական ազնվությունն ապահովելու նպատակով վերահսկվել են քննական պրոցեսները: Ամբիոնի վարիչի, ՈՒՄՎ ներկայացուցչի, ամբիոնի լաբորանտի հետ համատեղ

ստուգվել են հարցաշարերի, դասամատյաններում լրացված թեմաների, դասընթացների փաթեթների և հարցատոմսերի հարցերի համապատասխանությունը: 2021-2025 թթ. «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագիրը վերանայման աշխատանքային խմբի կողմից մշակվել է՝ հաշվի առնելով 2020/2024 ուսումնական տարվա կրթական ծրագրի SWOT վերլուծությունը, դասախոսների և ուսանողների շրջանում կատարված հարցումները, արտաքին շահակիցների հետ հանդիպումները, քննարկումները և բեչմարքինգը (ՀՀ, ՌԴ, Եվրոպական ուսումնական հաստատությունների բակալավրի կրթական ծրագրեր): Արդյունքում փոփոխություններ են կատարվել կրթական ծրագրի վերջնարդյունքներում: Վերջնարդյունքները քննարկվել են ամբիոնի և գիտխորհրդի նիստերին: Վերանայվել են կրթական մոդուլները դասախոսների և համապատասխան ամբիոնների կողմից: Դասընթացների վերջնարդյունքները, թեմաները, գնահատման չափանիշները համապատասխանեցվել են կրթական ծրագրով նախատեսված պահանջներին: / Հաշվետվությունը կցվում է/:

Լսեցին.- «Զբոսաշրջություն» ԿԾ պատասխանատու Ա. Ուլիխանյանին

2020–2021 ուս. տարվա ընթացքում առաջնորդվել ենք նախապես հաստատված աշխատանքային պլանով: Աշխատանքներն իրագործվել են տնօրինության, ՄԿՈԱ բաժնի, դեկանատի, ամբիոնի վարիչի մշտական աջակցությամբ:

«Զբոսաշրջություն» մասնագիտության կրթական ծրագրի վերանայման նպատակով, համաձայն ժամանակացույցի, կազմակերպվել են աշխատանքային խմբի հանդիպումներ, ինչպես նաև քննարկումներ ուսանողների և ամբիոնի բոլոր դասախոսների հետ: Հանդիպումների ընթացքում եղել են առաջարկություններ, որոնք քննարկվել են և հիմնավորված առաջարկների հիման վրա Կրթական ծրագրում կատարվել են փոփոխություններ: / Հաշվետվությունը կցվում է/:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- «Ֆինանսներ» (ըստ ոլորտի) և «Զբոսաշրջություն» ԿԾ պատասխանատուների 2020-21 ուստարվա աշխատանքները գնահատել բավարար:

5. *Լսեցին.- Ուսանողական խորհրդի (ՈՒԽ) նախագահի կատարած աշխատանքների ներկայացման և ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) նախագահի հաշվետվության մասին /Զեկ. Ա. Եսայան, Ի. Վարդանյան/:*

Լսեցին.- Ուսանողական խորհրդի (ՈՒԽ) նախագահ Ա. Եսայանին:

Ա. Եսայանը նշեց, որ ուսանողական խորհրդի պարտականությունները ստանձնել է ս.թ. ապրիլի 22-ից: Նա հաղորդեց, որ 10.05.2021 այցելել են Կենտրոնական բանկի Դիլիջանի գիտահետազոտական կենտրոն Դրամի թանգարան, որտեղ ծանոթացել են դրամի պատմությանը, բացահայտել հայկական դրամի գաղտնիքները և գեղեցկությունը: Միևնույն ժամանակ, նա ներկայացրեց նախատեսվող միջոցառումների ցանկը, որոնք պետք է իրականացվի.

- Այց՝ «Կանաչ ուսուցման կենտրոն» Green Training Center, Tavush Hovk
- Փափուկ հմտությունների բարելավմանը ուղղված սեմինարներ

  1.հաղորդակցման

  2.նորարար և ստեղծագործ մտքի զարգացման

  3.ճկուն և արագ որոշումներ կայացնելու հմտություններ

- Ֆակուլտետի ուսանողների կարիքների գնահատում, խնդիրների վերհանում, նոր առաջարկների և կարծիքների քննարկում
  1. Պարբերաբար հանդիպումներ պատվիրակների հետ
  2. Պարբերաբար հանդիպումներ ֆակուլտեի ուսանողների հետ
- Ձեռնարկատիրական հմտությունների զարգացում
  1. Սոցիալական ձեռներեցությանը ծանոթացում
- Հանդիպումներ ֆակուլտետի արդեն իսկ ավարտած և կարիերայում հաջողություններ գրանցած ուսանողների հետ , փորձի փոխանակում:

Լսեցին.- ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) նախագահ Ի. Վարդանյանին:

Ի. Վարդանյանը ներկայացրեց 2020-2021 ուստարվա ՈԻԳ-ի գործունեությունը: Արցախում ծավալված պատերազմական իրադրությամբ

պայմանավորված՝ մասնաճյուղի ՈւԽ կառույցի հետ միասին կազմակերպվել է անհրաժեշտ իրերի՝ ծխախոտի, չոր սննդի, դեղամիջոցների հավաքագրում: Հավաքագրվածը ուղարկվեց և՛ Արցախի, և՛ Տավուշի առաջնագիծ: Zoom հարթակի միջոցով կայացել է առցանց սեմինար, որին մասնակցել է շուրջ 25 ուսանող՝ վարում էր «Ֆինանսներ» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի Իրա Վարդանյանը:

Ստեղծվել են ակումբեր, որոնց նպատակն է համախմբել նույն հետաքրքրությունն ունեցող ուսանողներին: Տնտեսագետների ակումբը բաղկացած է 3 անդամից, տուրիզմի ակումբը՝ 7 անդամներից: Ակումբների հիմնական գործառույթներն են մասնագիտական դասընթացներ, կինոդիտումներ, ստուգողական խաղեր կազմակերպելը: Ակումբները կօգնեն ուսանողներին մասնագիտական խորհուրդներով: ՈւԳԸ ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերում տեղադրվել է մասնակցության հայտադիմում: Ի. Վարդանյանը նշեց, որ կազմակերպվել է բարեգործական ցուցահանդես-տոնավաճառ, որի նպատակն էր օգնել պատերազմում վիրավորում ստացած զինվորներին. հասույթը փոխանցվել է երկու զինվորների՝ յուրաքանչյուրին 100.000 ական դրամ՝ առողջության վերականգնման համար: ՈւԳԸ պաշտոնական էջում 5 օր շարունակ տեղադրվել է միայն Հայաստանի ու հայերի մասին մի շարք փաստեր, որի նպատակ էր ուսանողության շրջանակում այս եղանակով տարածել ու խրախուսել հայկականը:

Կազմապերվել է նաև վեբինարներ, ինտելեկտուալ խաղեր, հանդիպում-դասախոսություններ, որոնց ընթացքում ուսանողները ստացել են նոր ավելի կիրառական գիտելիք:

Արտահայտվեցին. - Լ. Մաղաթյանը,. Գ. Հովհաննիսյանը

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշում.- Ուսանողական խորհրդի (ՈւԽ) նախագահի կատարած աշխատանքների և ուսանողական գիտական ընկերության (ՈւԳԸ) նախագահի հաշվետվության մասին հողորդումն ընդունել ի գիտություն:

6. Լսեցին.- Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների ամբիոնային ծանրաբեռնվածությունների քննարկում և հաստատում /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/։

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ ամբիոնային ծանրաբեռնվածությունը 100% կատարված է։ Նա նշեց, եթե նախորդ տարիներին ամբիոնի ընդհանուր ժամաքանակը նվազել էր՝ պայմանավորված հեռակայում Զբոսաշրջություն մասնագիտության հինգերորդ կուրսի բացակայությամբ, ապա այս տարի այդ բացը համալրվել է։ Ծանրաբեռնվածության ավելացումը պայմանավորված է նաև այլ ֆակուլտետների ամբիոնների մուտքերի հաշվին։ Ինչն էլ մեզ հնարավորություն տվեց վերականգնել նախանցյալ տարվա բեռնվածությունը։ Գ. Հովահաննիսյանը նշեց, որ պրակտիկայի ժամերը դեռ բաշխված չեն, միաժամանակ նշելով, որ պրակտիկայի ժամերի զատումը դրույքաչափերից, այդքան էլ ձեռնտու չէ դասախոսին։

Մ. Միքայլեյանը նշեց, որ 2021-2022 թթ. ամբիոնի ծարաբեռնվածությունը էականորեն կրճատվել։ Այն պայմանավորված է երկու հիմնական պատճառով։ Նախ, և առկա, և հեռակա ուսուցման ավարտական կուրսերի ուսանողների թիվը էականորեն կրճատվել է /համապատասխանաբար՝ 7 և 20 ուսանողով/, որի պատճառով նախորդ ուսումնական տարվա համեմատ 540 ժամով կրճատվելու է ավարտական աշխատանքներին, 54 ժամով դրանց գրախոսություններին, այդ կուրսերի դասընթացների քննություններին հատկացվող ժամաքանակները, ինչպես նաև այլ ֆակուլտետներում ամբիոնի կողմից դասավանդվող կամընտրական դասընթացները չընտրելու հետևանքով «կորցված» ժամաքանակները։ Ընհանուր ծարաբեռնվածությունը կլինի ընդամենը 7 հաստիքից մի փոքր ավել, որից առկա ուսուցմանը՝ 4.1 հաստիք։

Արտահայտվեցին.- Ա. Սարբեկյանը, Ա. Ուլիխանյանը

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշում.- Հաստատել Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների ամբիոնային ծանրաբեռնվածությունները։

7. Լսեցին.- Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների հաջորդ ուստարվա անհատական բեռնվածությունների ներկայացում և քննարկում /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/։

Մ. Միքայելյանը և Գ. Հովհաննիսյանը նշեցին, որ ըստ 2021-2022 ուստարվա աշխատանքային ուսումնական պլանով նախատեսված, բոլոր դասընթացները մասնագիտական ամբիոնների կողմից բաշխված են, բաշխվել են նաև ավարտական աշխատանքները: Բաշխվել են նաև արտադրական և ուսումնական պրակտիկայի ժամերը:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի յուրաքանչյուր անդամ տեղեկացվել է 2021- 2022 ուստարվա իր անհատական բեռնվածությունը:

Նրանք նշեցին նաև, որ ֆակուլտետում գործող երկու ամբիոնների դասախոսներին տրամադրվել են իրենց անհատական բեռնվածությունը և մինչև օգոստոսի 31-ը պետք է ամբիոններ ներկայացնեն անհատական բեռնվածությանը համապատասխան աշնանային կիսամյակում դասավանդվող դասընթացների փաթեթները:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.-Հաստատել 2021-2022 ուստարվա ընդհանուր տնտեսագիտության և տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնների անհատական բեռնվածությունները:

Նախագահ՝ ***Գ. Ավետիսյան***
Քարտուղար՝ ***Ա. Ալեքսանյան***